

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան ... 12 Ժր.

Վեցամսեայ ... 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՆԱՆ

Երկու քիւ միկ ծրարով

Տարեկան ... 14 Ժր.

Վեցամսեայ ... 7 Ժր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60

Վեցամսեայ 1. 50 Տօղար «

ԿԱՆԻՍԻԿ

Մանուկնանսն ուղղը
20 տակրիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

«Travounk»

VARNA (Bulgarie)

Редация

НАБВСТНИКЪ

«Травунк»

ВАРНА

Գրութեանը եւ լեւ
տրութիւնը

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այդ շարժումները այնքան
զօրաւոր չեն որ յաջողին
ձեռն Պաշտ

Այս տարուան դէպքերը ա-
ռիթ չը տուին այնպիսի
միջնորդութեան մը, որ-
պէս տեղի ունեցաւ Զէյ-
թուն. որովհետեւ ապս-
տամները թշնամութիւննե-
րու սկիզբէն ետ մղուե-
ցան եւ ի վիճակի չեղան
պաշտպանելու ամբողջ կամ
այնպիսի զինուորականներ
ընել տալու որ արգել-
նաւոր բանակցութեան մը
հիմ ծառայէին:

Հեթօթ

(Հիւպատոս Ենգլիոյ)

Իրաւունքի վերջին երկու
թիւերու առաջին էջերուն մէջ
հրատարակեցինք երկու գրու-
թիւներ, որոնց առաջինը հայ
ժողովուրդին անհեռատես ու
անքաղաքագէտ շարժումները դա-
տապարտելով (Անգլիացի Հա-
յասէր գիւնադէտի մը բերնով),
«համբերութիւն» կը պատուի-
րէր եւ «Հայկական խնդիրը
իբրեւ Արեւելեան խնդիր, կարգ-
մը գործող հետ կարգադրուե-
լուն կատարելապէս ապահով և
դիւր» կըսէր. իսկ վերջինը
զոր գրած էր հիւստ, փոր-
ձառու և պատկառելի հայ մը,
մեր յեղափոխականներու սխալ-
ները մատնանշելով հանդերձ,
կը ծանրանար պետութեանց
պարտաւանջութեան վրայ և
պատմութեան և Աստուծոյ առ-
ջեւ պատասխանատու կը բռնէր
զանոնք — մասնաւորապէս Անգ-
լիան — որոնք դաշնագրերով ի-
րենց ստանձնած պարտականու-
թիւնը — Հայկական նահանգնե-
րուն մէջ բարենորոգումներ
գործադրել տալ — չեն կատա-
րեր ու հայուն ոչխարային
համբերատարութիւն կը յանձ-
նարարեն:

Վերջապէս թէ հայասէր դի-
ւանագէտը և թէ հիմնութեամբ
և փորձառութեամբ օժտուած
հայը համակարծիք են վերջին

յեղափոխական շարժումին ան-
քաւելի սխալ մը ըլլալու մասին,
իսկ վերջինը պատասխանատուու-
թեան մեծագոյն բաժինը կը
ծանրացնէ պետութիւններուն
վրայ:

Այո՛, սա ճշմարիտ է թէ պե-
տութիւնները իրենք ալ առան-
ձին առանձինն կը խոտովանին
որ հայկական նահանգները
թուրքին բարեկարգել տալու
պարտականութիւններն չեն կա-
տարած, որովհետեւ իրենց վեց
մեծ պետութեանց, միջեւ հա-
մաձայնութիւն գոյացնել անկա-
րելի եղած է ազդու միջոցներու
դիմելու համար: Այս անկարե-
ւիութեան պատճառն ալ պարզ է
թէ անոնց իւրաքանչիւրը թուր-
քիոյ մէջ իրեն յատուկ շահեր
ստեղծելու կամ արտօնութիւն-
ներ ձեռք բերելու նպատակաւ
չէ ուղած Սուլթանին անհաճոյ
երեւոյթի հայտնի համար,
երբ այս վերջինները չեն կըր-
ցած թուրքին դէմ առնաբար,
ճակատ առ ճակատ զայր և դէժ
քանի մը շարժմանը ստիպելով
պետութիւնները առիթ ունե-
նային միջամտելու:

Ռուսիոյ արտաքին գործոց նա-
խարարը քանի մը տարի առաջ
նմանցուցած էր պետութիւննե-
րը ջրհանկիրներու որոնք հըր-
դեհ եղած տեղը կը վաղեն մա-
րելու համար, այսինքն կուի-
եղած տեղը՝ միջամտելու ու խա-
ղաղեցնելու համար: Ահա այս մի-
ջամտելու առիթը մենք չը ներ-
կայացուցինք, որովհետեւ ուժով
չը ներկայացանք. ինչպէս Մր.
ձէյֆս Պաշտ ըսաւ, «Այդ շար-
ժումները այնքան զօրաւոր չեն
որ յաջողին» իսկ Սասնոյ այս
տարուան դէպքին ապստամբնե-
րու և թուրք կառավարութեան
միջեւ միջամտութիւն ընելու
լիազօրութիւն ստացող ու այս
պաշտօնով Սուլթանի անգլիա-
կան հիւպատոս Մր. Հէթօթ
միջ հասնելէն երկու օր յետոյ
սա տեղերը գրեց իր գեղար-
արտական
«Այս տարուան դէպքերը առիթ
չը տուին այնպիսի միջնորդութեան
մը որպէս տեղի ունեցաւ Զէյթուն»:

որովհետեւ ապստամբները թշնամու-
թիւններու սկիզբէն ետ մղուեցան
եւ ի վիճակի չեղան պաշտպանելու
ամբողջ կամ այնպիսի զինուոր-
ականներ ընել տալու որ արգելնա-
ւոր բանակցութեան մը հիմ ծառայէ-
ին: » (տես. անգլ. ձեռնարկ տետրա-
կը)

Ինչպէս Անգլ. ճեւղակ տետ-
րակէն բացօրոյ կը տեսնուի,
երբ պետութիւնները լինելիա,
Ֆրանսա և Ռուսիա — Անգլիոյ
առաջարկութեամբ — հրահանգ
տուած էին իրենց գեղարտու-
րուն եւ ասոնք հիւպատոսնե-
րուն Սասնոյ հայ ապստամբ-
ներուն և թուրք կառավարու-
թեան միջեւ միջամտելու: Այս
միջամտութիւնը պիտի ըլլար
«թէ քանի մը օր դիմադրե-
լու ուժ ունենային Սասուն-
ցիք»:

Նորագոյն այս դէպքը, ինչ-
պէս կը հաստատուի հրատա-
րակուած գիւնադիտական վա-
ւերաթուղթերով, յայտ կուտայ
թէ պետութիւնները անտար-
բեր չեն մնացած և անոնցմէ
մէկ քանին պատրաստ գտնը-
ւած են միջամտելու: Հայոց
պաշտպանութեան համար, բայց
մեր յեղափոխական շարժումնե-
րը այդ միջամտութիւնը ար-
գարացնելու (գիւնադիտութիւն),
և կարելի ընելու չափ զօրաւոր
չեն եղած:

Եւ այս անհերքելի փաս-
տերով ահռելի ազդեցիկ գըլ-
խաւոր պատասխանատուութիւնը
կը ծանրանայ այն յեղափո-
խական խորակին վրայ, որ անց-
եալ ձմեռէն ի վեր գիտնալով
հանդերձ Սասնոյ գլխուն պատ-
րաստուելու վրայ եղող փոր-
ձանքները, գիտնալով հանդերձ
իր ուժերուն տկարութիւնը,
գիտնալով հանդերձ Սասունցի-
ներուն անգէն լինելը, կուսակ-
ցամուկական սին ետութեամբ մը
արհամարհեց միութեան և հա-
մերաշխութեան առէն առաջարկ
որ կուգար տարբեր հայ յե-
ղափոխական կազմակերպութիւն-
ներէ և որ կրնար դէպքերուն
տարբեր կերպարանք մը տալ:
Եթէ հազարէ աւելի հայ զոհե-

րուն արիւնը և 15000 մերկ ու
նոթի արկածաւանները կը բողո-
քեն ու պիտի բողոքեն թուր-
քէն վերջ այդ ետամու հայ
խմբակի վարիչներուն դէմ, ո-
րոնց պատասխանատուութիւնը
պետութիւններուն՝ շատ ու շատ
կը գերազանցէ:

Այո՛, այդ զոհերու արիւնը
պարտք կը դնէ ամէն հայու
վրայ միացած ուժերով զօրեղա-
պէս ընդգրկել Հայքնիքի դատը
եւ հարկադրել արտասահմանի
յեղափոխական կազմակերպու-
թիւնները անպայման ձեռք
ձեռքի տալու, հայրենիքի մեր
եղբայրներուն ինքնապաշտպա-
նութեան միջոցներ ընծայե-
լու և ի հարկին պետութեանց
միջամտութիւնը կարելի ընե-
լու համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅՈՅՆԵՐԸ ԵՒ ՌՈՒՄԷՆՆԵՐԸ

Վիէննայի Բոլիք. Բօրխար. ի
խմբագիրներէն մին քանի մը
օր առաջ անսակցութիւն մը ու-
նենալով Ռուսիոյ արտաքին
գործոց նախարար Տ. Ժան Պը-
ռաթիանցի հետ, այս վերջինոյն
յատակ և բացօրոյ յայտարարու-
թիւնները հետեւեալ տողերով
արտագրած է, որոնք լաւ կը
բացատրեն մակեդոնական խնդ-
րոյն կնճռատութիւններէ մին
և հետեւաբար կը հետաքրքրեն
մեր ընթերցողները:

Նախարարը յայտարարեց նախ թէ,
թէպէտ խաղաղութիւն չը տրէր Մա-
կեդոնիոյ մէջ, սակայն յոյժ հաւանա-
կան է որ նոր կնճռատութիւններ չը
պիտի երևան գան: Գաղով թուրքիոյ
մէջ բնակող Ռուսներուն հարցին,
պէտք է յուսալ որ անոնց համեստ
խնդրանքները վերջապէս պիտի կրնան
իրականանալ: Ռուսիոյ վստահու-
թիւն կը ներշնչէ իրողութիւնը, թէ
թուրքիոյ ժողովուրդի այդ մասին
շահերը կատարեալ կերպով կը հա-
մաձայնին եւս աւելի մեծ շահերու
հետ, այն է ներկայ վիճակին անփո-
փոխ պահուելը, եւ իրականացումը
ծրագրին այն լարենորոգմանց որոնք
քաղաքական հաւասար իրաւունքներ

տուող վարչութիւն մը պիտի ստեղծեն Մակեդոնիոյ թաղաքացիականաց միջեւ : Գոյց-Վլաշները որ խաղաղութեան թանկագին տարր մը կը կազմեն , եւ որոնց մասնաճիւղն ու բարոյական բարձր յատկութիւնները իրաւ ցնահատուած են , բնականաբար կը վայելին բոլոր համակրանքը Ռումանիոյ իրենց եղբայրներուն ուրոնք կը ջանան անոնց ազգայնական անհատականութիւնը պաշտպանել , բան մը որ անսխալաբէ ցարդ ազգութիւնն ու կրօնքի միջեւ յարաբերուած չփոթանալու շնորհիւ :

Շատ երկար ժամանակ չկող , երբ յունական պատրիարքարանք քրիստոնէութեան միակ ներկայացուցիչն էր Թուրքիոյ մէջ , հիւլենականութիւնը ու քրիստոնէութիւնը չփոթուած էին միեւնոյն գաղափարին մէջ : Բայց երկրորդութիւնը դեռ վերջած չէ , ըստ Տ. Պապիանոսի , դեռ այսօր անոնք որ ինքզինքնին Գոյց-Վլաշ կը կոչեն , եւ կը խոստովանին թէ Ռումէն են , ուսմէն լեզուն հետ կը գործածեն — որոշ մաս մը միայն , իրաւ է — նաեւ յունարէնը՝ իրենց օտարներու հետ ունեցած յարաբերութեանց մէջ : Բայց , նոյնիսկ ատոնք , իրենց ընտանեաց մէջ , ի ննջ կնոջ ու զաւակաց հետ , տարամբօրէն ուսմաներէն կը խօսին : Իրենց ազգայնական կարծեցեալ իրաւունքները պաշտպանելու համար , Յոյները իրաւ ճարտարամիտ դիւանագիտական դոց ասացուածք մը հնարեցին , այն է՝ վրանսիստ յոյնիք բառը :

Հակառակ ամէն դժուարութեանց Վլաշ տարրը մեծ յառաջդիմութիւններ կընէ , եւ , ամէն օր , Մակեդոնիոյ մէջ նոր վլաշ հոստարակութիւն կը կը կազմուի : Դժուարութիւնները կուզան յոյն պատրիարքարանէն , որ կերեւակայէ , թէ քսաներորդ դարուն մէջ , կրօնական խորագանք կրնայ ժողովուրդի մը ազգային զգացումը խղիւղել :

Այս նպատակաւ պատրիարքարանին ցոյց տուած գործունէութիւնը՝ պարզապէս ամարդի է : Ռումանական զգացումներ տածող քահանաները կը բանապուրին , իրենց կենդանութեան տունն նմանօրինակ զգացումներ ցոյց տուող մեծաշնորհք քրիստոնէից գերեզմանատունէն դուրս կը թաղուին , անոնք որ կը փախաբին ժամերգութեանց ներկայ գտնուիլ ստիպուած են հակառակմէն գրաւոր յայտարարութիւններ ստորագրել , Ամէն մէկ ուսմէն դպրոց պատճառ կուտայ խորհրդանշաններու եւ դժուար մեքենայութեանց , որոնցմով Յոյները կը ջանան զրգուիլ Օսմանեան իշխանութիւնները :

Ռումանական եկեղեցիներու մէջ վլաշ լեզուն գործածելը , յայտ պատրիարքարանի , ամենածանր մեղքն է : Եւ սակայն , թէեւ ընտրեալ ուղղափառներ . Ռումները՝ ուսման լեզունով կազմին , Սերպերը՝ սերպերէն , Ռումանիոյ Ռումէնները՝ ուսմաներէն : Միայն Թուրքիոյ Ռումէնները ինքզինքնին ստիպուած կը սեռնեն յունարէն աղօթելու — ապա թէ ոչ կը բանադուրին :

Չը դժուարեցոյցներ երբեք մեր բոլոր ջանքերը , կը շարունակէ Տ. Պրաթիանոս , պատրիարքարանը բերելու այն զգացումներուն , որ ամենէն աւելի կը յարմարին իր տեղեկական հանդամանքին :

Տ. Պրաթիանոս վերջացուց , ցուցունելով թէ Ռումանական հարցը անմիջական լուծում մը կը պահանջէ : Մտընցեալքի ծրագրի շրջանակին

մէջ դրուելով , Գոյց-Վլաշներու պահանջները բնաւ չափազանց չեն : Եւրպատրիարքները ցարդ լոկի համբերել տուաւ Գոյց-Վլաշներուն , սակայն լուազոյն օրերու : Բայց իրենց խնդրանքին իրականացումը իստ երկար ժամանակ կուշանայ : Բնութեամբ յաւանային բանադրանքին ու քոմիթա-ճիին շրջանաբեր միջին՝ այս դժուարեցումը վերջապէս ամէն համարութիւն պիտի կորանցնեն :

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Բ

ԳԵՂՈՒՆԻ — Գեղունիին զրական բովանդակութիւնը՝ մենք նպատակաւ յարմար դատեցինք բաժնելու թարգմանութիւններու եւ ինքնատիպ զբուլանքներու :

Թարգմանութիւններու բաժնին մէջ կը գտնենք նաեւ Մեսրոպ Նուպարեանի ֆրանսերէնէ հայերէնի վերածած քսան առկները : Մտայ է թէ հիմա այս ձեւով առակներու մօտեւ որ մեր աշխարհիկ զրականութեան առաջին շրջանին կը պատկանի՝ քիչ մը անցած է : Բայց ամէն պարագայի մէջ՝ Թարգմանիչը որ անբերայնիք օրէն մեծ լեզուաբանական եւ զրադիտական տաղանդ ունի՝ իր գործը գնահատելի յաջողութեամբ ի գլուխ հանած է՝ թէպէտ Այլ-պէս եպիսկոպոսի մը ընդարձակ հանձարը կը պակսի իրեն : Իրենց բնադրին մէջ արդէն լաւ ծանօթ այս առակները՝ հայերէնին մէջ սահուն եւ նորօրէն արտայայտուած են՝ բայց զարմեալ ճրագի մը առջեւ երկար ժամերով ճշնող մտքի եւ տաղով ձեռքերու հետքերը կը կրեն :

Անտոն Ռոզդա խորագրով յոգուածն ալ Շ. Փիլ. Եստիկարի թարգմանութիւնն է խաղերէնէ եւ հակառակ իր մի քանի խրճիտութիւններուն եւ իստալանդութիւններուն՝ սոյգում մին ալ կապացուցանէ թէ հայերէն լեզուն ճոխութիւնը եւ ճկունութիւնը ունի զեղարուեստական գաղափարներու պէս փափուկ եւ թեքիշխական բաներ իսկ արտայայտելու : Բայց ըստ մեզ այս թարգմանական փորձերուն ամենէն չափեանը Շ. Ա. Ղազարեանինն է որ այս վերջերս իր վրայ առած է ի տալանայ վիճակործա Ազանուրի քերթուածները հայացնել : Հոս նորագոյաց եւ կոկիկցած գրչի տէր լատինիս մըն է որ մէկ ուրիշ աշխատէ ինքնատիպ եւ բարձր բանասիրտ որ արտին յոյսերուն եւ մտքին խոյանքներուն թարգմանը կուզէ ըլլալ հայ լեզուի մէջ :

Եւ ես վստահ եմ թէ քննադիրը այս արձագանքումին մէջ քիչ քան տուեմ է : Կան հոս ու հոն միմիութիւններ եւ անհարթութիւններ ինչպէս նաեւ կէս լուծուած գծուարութիւններու տկն յայտնի հետքերը : Չարաչար գոյծածուած է մէկ սողի մէջ սխալուած հաստատութիւն մը անակնկալ կերպով ընդհատելով միւս սողին մէջ շարունակելու ազատութիւնն որ քիչն մէջ համ ըստ իր յաճութեամբ թափախուած միայն ձանձրութիւնն ու փերթուած քերթուած թարգմանական տեւիտ անհաւասարութիւն մըն ալ նկատելի է : Եւ սակայն ինձ անուշախալ կը թուի թէ Հիւրմիւզները եւ Բագրատուներնրը — չըսենք Այլ-պէս — իրենց վերաբերուն եւ իրենց անդիտ շնորհքին խոշորէկ պատառ մը ժաւանդ են թողած իրենց այս ժրգան

եւ զգալիքն աճող սանին : Բաւական սահուն է «Սէլլայի Հովերը» , սիրուն է խօսակցութիւնը սրուն վերջին երեք տողերը գեղադարար չեն յաջողած : Շատ լաւ է «Նսաւ»-ը Ողջոյնը» , «Վերագարձը» եւ օր մէկը համբնք :

Ինքնատիպ զրուածներուն մէջ՝ Ահարոնեանին վրայ Լէօն ուսումնասիրութիւնը այն է ինչ որ մենք այլ եւս վարժուեցանք սպասել Լէօն , այսինքն երկարարան կրկնող , մանրամասնող , բաւական խորունկը պրոպ Դ ախորժի ռճ մը որ մեր լաւ գիտցածը եւ մեր բնաւ չգիտցածը իր պատմէ միւսնոյն հանգարտիկ ոգեւորութեամբ թողով զրական ու անմոտանալի սպաւորութիւն մը իստին : Լէօն՝ հակառակ իր թերութիւններուն մեր ամենէն նկարէն զրոյնեւրէն մէկը՝ եւ թերեւս մեր ամենէն սիրտէմաթիթ լի վաշեցող եւ վերլուծող քննադատն է :

Պ. Առաքելեանի յոգուածը պարսկահայութեան անցելուն վրայ՝ շատ հաճանքիչ ու չափեկան բան մըն է : Պիտի սիրէինք խմանալ թէ ինչ են եւ զամ իր աղիկութեան ազդիւրները :

Շ. Փիլ. Եստիկարի «պատյա մը Նախապիտանք մէջ» ըրաւական հետաքրքրաշարժ է եւ միայն յայտնաբեր այն է որ ընտանեւ տեսարաններու նկարագրութիւնները շատ երկարաձիգ եւ ծանրաբեռնուած են : Ուր վրձնի ճարտար եւ ամբողջական հարուած մը պէտք է՝ հոն մանրամասնութիւններու կուտակումը ապկար միջոց մըն է : Բայց Շ. Եստիկարը անմասնազ չէ մնացած Վենետիկեան հայրերու ճոխ երբեմն ալ շուայրօրէն ճոխ լեզու մը գործածելու ձիրքէն :

Բայց ինչ՝ ըսենք Շ. Երէմեանի «Ստիկնիկ» տիտղոսով տողապատուած ողբերգութեամբ : Ըստ մեզ այս գրքը , սոճի իրեն երկարաշունչ յաջանախա երկասիրութիւն մը որ իր տեսակով հիմա մեր մէջ շատ հազուադէպ է՝ արժանի է մասնաւոր եւ անաչառ ուսումնասիրութեան մը : Բայց մեղի կը պակսի տեղը : Հետեւաբար պիտի շատանաք միայն համառօտակի տալ մեր գաղափարները՝ զոր կրնանք ի հարկին՝ որոշ փաստերու վրայ կոթնցնել : «Ստիկնիկ» որ պատմական ողբերգութիւն մըն է թէ քօն ուլ եւ թէ ձեւով կը մեղանչէ թատերգութեան բոլոր էական օրէնքներուն դէմ : Չկայ զէպերու նախապատրաստող սկզբնաւորութիւն մը , բնականօրէն կամ ճարտարօրէն յառաջ տարուած զարգացում մը եւ ոչ ալ զորաւոր , խառնած մարդուն երեւակայութիւնը եւ ուշագրութիւնը կաշկանդող լուծում մը որմէ վերջ մարդ կուենայ հիասթափումի ստիպական վայրկեանը : Յետեւ Ոսկեանց եւ Սուքիսեանց մարտիրոսարանական առաստիւղին վրայ (տես Այլ-պէս) Ռոփերը) այս պատմութիւններնքն անկապ անկենդան կիսիք մըն էր իմէ կատարող երեւակայութիւն մը զանոնք չը զօդէր ու հապա տաքուկ զրական մասով չը պատէր : Եկուր տես որ Շ. Երէմեանը մոռցեր է ոսկորները իրարու հետ իրենց տեղին եւ դիրքին համեմատ կապելու : Իր միտքը վատ կերպով կը տեսնէ պատկերներ եւ տեսարաններ , բայց եղելու թերեւորու պատմական եւ հոգեբանական յարգողութիւնը եւ կապակցութիւնը անկէ մղաններով հետու կը մնան :

Եւ անհ ինչու՝ գէթ այս տողերը զրոյր շատ աւելի հոճոյքով կարգաց տեսարաններու վերեւ կրուած թափաբարեմիջ վերաբերեալ տրճակ հրահանգները քան բուն ողբերգութիւնը :

Տիրող դադափարը կը թուի ըլլալ Սաթնիկի կրօնական տարակոյսը որ միշտ ի յայտ կու գայ եւ որով ալ կը վերջանայ թատերգութիւնը : Բայց ինչ հարկ կար երրորդ արարուածին ամենատուար մասը յայտնաբերող լեցնելու : Կարգալու ասին՝ մենք վերլուծումը ունեցանք մեր մանկական օրերուն երբ Վենետիկ տպուած «Վարք Սրբոյր» կը լսէինք լայով , բայց այս աղամ չը լացինք : Իրողութիւնը այս է որ մեր կրօնական կենսաբար հիմա իր քննական-իրիւսովաւական աստիճանին է հասած եւ այլեւս այս «գաղափարը ըստաները անժամանակ են եւ անտեղի վանականներու ճաշարանէն դուրս :

Վաղով ձեւին՝ հեղինակը՝ ջգուտ , բաւալատ լայց ծանծաղ ռճ մը ունի : Խմբերգները միակ են , պատմականները շատ ինքզն : Սա կարեւոր կէտն իսկ չէ ըմբռնուած թէ ողբերգութեան մէջ եղելութիւն մը պատմելու համար հանգարտ , լեցուն երեւէջով չափեր պէտք են , այս յայտնական ընդհատ տողերը նրթն կը վրկպեցնեն ուշադրութիւնը , իսկ օճի եւ լեզուի անկումները :

«Սը ինչ՝ պոռչառք հաշէք լրբօրէն» : «Ամբոխ կոյտ կոյտ հոն չեղնակոյտ , էր զէպերէն» :

«Չարք ու քաղիք աշխր շանթարձակ «կաթով ահաբեկ կիյնան շանսատակ : Եւ ին :

Ուրանալու չէր որ հոս հոն բաւական լաւ յաջողուած կտորներու կը հանդիպենք եւ վայրկեան մը կը յուսանք — որ արեւոյ տափակութիւնն պիտի ազատենք :

Բայց չուշանար առիթը նորէն կրկնելու : Անտուած պահէ մարդը երբ կօշկակարը կը յամտի կօշիկէն վեր ելնել »

ՕՐԻՈՆ

Պ. ԷԳՆԱԵԱՆԻ ՈՐԲԵՐԸ

ԲՈՐԻՉ 25 նոյեմ .

(Շար . նախորդ թիւին)

Եոյնպէս ալ աւելի ճիշդ է որ «որբերուն ազգասիրական զգացումները կը խեղդեն» ու այնքան հայաստաց հրէշին մէկն եմ որ , այն միջոցին իսկ երբ Բարիդեան թերթեր հայկական կոտորածներու վրայ իմ օտարադրութիւն կրող յոգածներ կը հրատարակեն , եւ ասոյն «որբերուն ազգասիրական զգացումները կը խեղդեն» , ինչ հրէշ , ու արժանի չէի որ , այս ծառայութեանց իր արդար վարձատրութիւն , իմ օգոստափառ Համիտ վեհապետս ու անկախ սակէ չորս տարի առաջ , գիւ ծնողքիս հետ Պօլսէն աքսորել տար յանկարծ (Տես «Բրօ Արմէնիա» թիւ 8) որպէսզի յետոյ ալ թափառէյի ասոյն անդին , մինչեւ որ պէտք ունենայի Ղուսիւնեանց ցաւազարին գիւ «երկու ամիս» նայելուն , ինչ ազգաստեղ հրէշ . []

Միւս կողմէ , միւսակ «ազգաստեղ հրէշ» մը չեմ , հապա նաեւ «մարդկային ընկերութենէ դուրս ձգուելու արժանի» ալ . թէեւ ոչ ոք մինչեւ հիմակ ըսած ըլլայ որ Ղուսիւնեանց գրաւարկին պէս Միւնիք Պէլի ոտքերուն ինկած ըլլամ որ զիս Պօլս կրէի որ Սուլթանին արեւաշատութեան համար աղօթելով կենաքս անցնեմ :

Ու ինչ էլ յանցանքս, Աստուած ծիծառ, որ այսօրան խիստ բլրայ արտաբան

—Վասնզի կը պատահանէ Ղուծ-րուեանց գրաչարիկը. մէկ նամակով մը 23 տարիէ ի վեր գոյու-թիւն ունեցող ընտանիք մը քայ-քայեցի :

Ու ինչպէս կողմէք որ զիս շուտով մը « մարդկային ընկե-րութենէ դուրս » չի ձգեն, ես որ իր ամուսնէն նամակով մը զատեր եմ 23 տարիէ ի վեր ամուսնա-ցած կին մը . . . որուն անպար-կեշտութիւնը Վասնայի Տ. Մարտի-րոս քահանան եւ արդի թաղ. կնոքները, հանդիսաւոր նիստի մը մէջ վկայութիւններով հաստատելէ ետք : Պատրիարքին զեկուցած են պաշտօնական ինքնագրով մը, որուն վրայ կրօն. ժողովը նոյն այդ կինը անպայման կերպով հայ եկեղեցւոյ արտոգորութիւններէն զր-կած է. իր այդ արշուժը Տէր Մարտիրոսի իմացնելով. ալ եւս հարկ կ'ա՛յ որ ըսեմ թէ ինչ ան-ըզգամ ցածին մէկն ըլլալու հմ. «մարդկային ընկերութենէ դուրս ձգուելու արժանի», որ այսպէս կը յանդգնիմ Վասնայի թաղական-ներուն ու կրօն. ժողովին հետ մեկտեղ, անպարկեշտ կին մը իր պարկեշտ ամուսնէն զատելու . . . կամ պարկեշտ ամուսին մը իր ան պարկեշտ կնոջմէն (ա)զատելու. ա՛խ եթէ հաւատաքնանական խարոյկ-ները զեռ ըլլային. ինչպէս ար-ժանի էր, անգամ մը որ դատուե-ցայ ու «մարդկային ընկերութենէ դուրս ձգուեցայ», որ զիս ողջ ողջ այրէին . . . ետեւէս ալ Վասնա-յի թաղականները ու կրօն. ժո-ղովը. վասնզի, եթէ ես, ողիմ-պիական անարկու Արամազդ, յօնքերու դժոխային պատումէ մը ետք, նամակի թագուն ու գիրա-գոյն հարուածով մը (ա)զատեցի իր ամուսնէն 23 տարիէ ի վեր ամուս-նացած . . . անպարկեշտ կին մը. ու յաւետ քայքայեցի փշրեցի . . . անպատուութեան վրայ նստած ըն-

տանիք մը. — միւս կողմէ իմ այդ սրբապիղծ արարքին չէ՞ որ մեղ-սակից ըրի նոյնպէս Վասնայի թաղ. արաններն ու կրօն. ժողովը :

Ահա թէ ինչու համար, ինչպէս որ դարձած աշքեր անարկաները իրենց հակառակ կողմէն կը տես-նեն, դարձած ուղեղ մըն ալ դէպ-քերը իրենց հակառակէն կը դա-տէ. վերջապէս հա՛րկ է բոլոր որ, Վարդայի պէս «դարձած» հերոս մըն ալ, (որ Ռուսական քաջարողը գր-պանը գնելէն ետք «հերոսաբար») ինքզինքը յեղ. կնիքով Պոլիս բու-նիլ տուաւ . . . վստահ ու Մաք-զիմօֆ կէս ժամէն զինքը պիտի ա-ղաւթէր) ինչու է ի փոթար ասանկ «դարձած» ճշմարտութիւններ զԵր-կարաց հիւրընկալելու :

Վասնզի, ասանց այս «դարձած» ճշմարտութիւններու, ո՞վ պիտի ըզ-բաղէր «Շարժումով» :

[] Բարդի հայերէն ոմանք գիտեն թէ, ինծի հայրենասիրութեան դաս առաւ յաւակնող այս ցաւազարը ինչպէս մէկ քանի տարի ատոյ՝ «Գուլթան» խմբագիր Պ. Մեծատուր-եանի գիմելով, անոր Միւնիք Պէ-յին իր անունով աղայանքի նամակ մը գրել տուած է, ըսելով թէ իր թրքերէն տառերը դիպանին կը թո-ղու, ու եթէ գինքը Անատուր-ըրկեն, կը խոստանայ մինչեւ կեան-քին վերջը Սուլթանին իբր հլու ու հաւատարիմ հպատակ ապրիլ :

Տ. ԷԼԻՄԱՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Կարգ մը թերթեր հաղորդած էին թէ Սիմֆերոպոլի հայ եկե-ղեցական եւ դպրոցական կալ-ւածները վերադարձուած են հա-յոյ : Հաստատուեցաւ թէ այդ թիւրիմացութիւն մըն է. ետ դարձուածը Ալքատախնամ ըն-կերութեան դրամն է, զոր ռուս

պաշտօնները եկեղեցւոյ դո-քերուն հետ պաշտած էին :

Կալուածները վերադարձնե-լու մտադ իր չի բեւար կառավա-րութիւնը, որ վերջին օրեր հը-րամայի է Ալգերման քաղաքի եկեղեցիին վերաշինութեան հա-մար հաւաքուած 13000 ըսպլին ալ յանձնել Բիշնէվի գաւառա-պետին :

—Բէթերսպուրկէ հեռագրու-ած է եւրոպական թերթերու «Ռուսիոյ բարձրաստիճան հո-գեւորականութիւնը կառավարու-թեան խնդրագիր մը ներկայա-ցընելով, նախարար Էլէվէի օրով գրաւուած եկեղեցական կալուած-ներու վերադարձուելը խնդրած է :

—Հինգ շաբթի զիշեր տեղի ունեցած թատերական երեկոյ-թէն 500 ֆր ի մօտ հոսոյթ մը գոյացաւ տեղւոյս Որբախնամին :

—Ազատ Բեմ ի մէջ կը կար-գանք հետեւեալները .

Տիգրան քաջայի կսակը

Հանգուցեալ Տիգրան քաջա տկա-ր 1899 ապրիլ 24 թուականի կտա-կագրով մը ազգին կը թողու 50, 000 ֆր. սրպէսզի հող մը գնուի, «Ե-թէ կարելի է ազգապատկան հո-ղային կալուածներուն կից» եւ ա-նոր հասոյթը յատկացուի Գահիրէի Ազգ. Առաջնորդարանի ընդհանուր պէտքերուն : Նոյնպէս, Գահիրէի հայ ազգայնական թաղապետի հա-մար կը թողու 200 ոսկի :

Ի յարգանս իրենց հօր յի-շատակին՝ Տիգրան քաջայի գաւա-կները հետեւեալ նուիրատուութիւն-ները ըրած են :

200 եգիպտ. ոսկի Գահիրէի ազգայնական, 2500 դր. Որբա-խնամներուն կտան Յանձնաժողովին 3000 դր. Գահիրէի Զէյթունի Բա-րեպիրացին, 5000 դր. Լուսարան Ընթերցարան, 1000 Ալքատախնա-

մին, 1000 դր. Հայկական Նուա-գածուաց խումբին :

Ասոնցմէ զատ, հանգուցեալին դուստրը Օր. Ինճի տ'Ապրո' կա-ռավարութեան իրեն յատկացուցած 16 ոսկիի թոշակը նուիրած է Գա-հիրէի ազգայնական, պայմանաւ որ պղտիկ դրամադրութիւնը ձեռն առնայ անոնց մէջմէկ արհեստի կամ գործի ձեռնարկելու :

Խոշիկակուն շնորհներ

Տեղական թերթերէ կիմանաք թէ Խոշիկը Բ. Կարգի Օսմանիէ շնորհած է Ալքատախ քաջա Բարթո-ղի եւ Սանիէի ատոման Արամ պէյ տ'Ապրոսի, որդի հանգուցեալ Տիգրան քաջայի :


Ռուզվիք եւ Հայերը

Իր վերջնաբերութեան ատիւ Գա-հիրէի Ազգ. Առաջնորդարանի կող-մէն ուղղուած չ'արհեստական հե-ռագրին ի պատասխան նախագահ Ռուզվիք իր շնորհակալութիւնը հեռագրած է Եգիպտոսի ամերիկ-եան չիւանագրատական գործակատարի փոխանորդ Մր. Մորկընի միջոցաւ :

—Արմենիայի մէջ կը կարգանք հետեւեալը .

Կիմանաք թէ Վեհափառ կա-թողիկոսը յատուկ կողմով մը Անատոնիոնապարհ հոյ գաղութի ո-րի հովուական կեդրոնական ին-չօվա քաղաք, հոգեւոր Հովիւ նը-շանակեր է Արթ. Արսէն վար-դապետ Վեհուին, որ Ամերիկաի առաջնորդական տեղապահութեան պաշտօնը կը վարէ այժմ :

Ամերիկայի առաջնորդ Գեր. Յով-սէփ արքեպիսկոպոս Սարաճեան այնպէս կարգադրեր է որ մինչեւ Եւրոպայի ամերիկա իր վերադար-ձը Հ. Արսէն վեհուին շարու-նակէ Տեղապահութեան պաշտօնը եւ արհեստեւ ամերիկայէն մեկնի զե-պի իր նոր պաշտօնավայրը Սուչո-վա երթալու համար :



ՆԵՐՍԵՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲՈՂՈՒՎԷՊ հանդէսէ)

«Ես կամենում էի, որ թէ այդ փողերը քան իջմիծին եւ թէ միւս վիճակները, որ մի անգ ժողովուած նշանաւոր գումար լի նի եւ այդ գումարով բան բաց անենք՝ մեր ողորմելի ժողովրդին թեթեւ տոկոսով փոխա-ռութիւն տալու. ողորմելի գիւղացիները շատ ծանր տոկոսով են վճարում վախատուներին : Ես կը գրեմ խալիպանցին, որ այլ եւս չու-ղարկի : Ի՞նչ որ այդ գումարը կընկնի վիճա-կաւոր առաջնորդներէ ձեռքն եւ կը նա՞ղդեն բո-լորը » : Նա գրեց Խալիպանցիէ եւ դադարե-ցրեց զրամներ առաքումն : Կաթողիկոսի գու-շակութիւնը կատարուեց : Գարբէլ վարդապետ Ալվազովսկին Բեաւարարայի առաջնորդ նշանա-կուեց տէրութեան կարգադրութեամբ : Նա ստա-ցաւ եկեղեցական գումարները Խալիպանցից եւ գործ զրեց թէ ողորմաբար զպրոց կառու-ցանելու վերայ :

Շատերը մեղադրում էին Ներսէս կաթողի-կոսին, որ նա աշխարհական անձանց կամ քա-ղահաններին էր յանձնում վիճակներում յա-

ջորդական պաշտօններ կուտակում հոգեւորա-կաների փոխարէն. բայց անիրաւոյի մեղադ-րանք էր : Այն ժամանակուայ կուտակում հո-գեւորականները Կարեցու ոգով եւ ուղ-ղութեամբ անուած մարդիկ էին. զանազան ան-նիւրելի միջոցներով եւ յափշտակութիւններով աշխատում էին միմիայն իրենց գրպանը հա-րստացնելու, իսկ իջմիծին գանձարանին շատ անշնչաւ գումար էին հասցնում. բացի սո-րանց իրանց անվայել նիստ ու կացով իրանց վարկը բոլորովին վայր էին ձգել. ժողովրդա-կանք չարուշակ բողոքում էին նորանց վի-րայ կաթողիկոսին, թուելով նորանց գալթակ-գեցուցիչ արարքները : Սկզբում կաթողիկոսը վի-ճակների քննիչներ նշանակեց Նիկողայոս եպիս-կոպոս Տէր—Մարուգեանցին, Սարգիս եպիսկո-պոս Զալալիանցին եւ Թադէոս վարդապետ Բէկ-նազարեանցին (որ յետոյ Սպահանի եւ Հնդ-կաստանի թեմի առաջնորդ) տալով նորանց ի-րաւունք քննելու. բոլոր վիճակաւոր առաջնորդ-ների եւ նորանց կարգած գործակալների, յա-ջորդների եւ կոնսիստորեաների գործերն : Երբ այդ քննութիւններ ի յայտ բերեց լազմաթիւ զեղ-ծումներ, յափշտակութիւններ արքային տրո-հանց եւ կաշառաւորութիւններ, կաթողիկոսն ան-ձարացած նշանաւոր յաջորդական եւ գործա-կալական պաշտօններում աշխարհականներին եւ վստահելի քահանաներին, որոնք արդարացրին նորա յոյժ՝ կրկնապատկելով իջմիծին գանձա-

րանի եկամուսները : Շատերը մինչեւ այսօր էլ երեւին համարում են բռնա՛ւալ եւ խտաւարտ որ նոյնպէս անարդար եւ սխալ է. նա իր-բեւ հայր հասարակաց՝ աշխատում էր հոգեւո-րականների մէջ պարտաճանաչութիւն հաստատել, ասել շահասիրութիւնն եւ անհարգատեւիւնը, բայց երբ անողորմ էր գտնում ոմանց եւ ան-զուպէլ՝ արդարեւ խիստ պատժում էր, իսկ ար-ժանաւոր անձանց առաջարկը վարձատրում : Նա մի անգամ Կոչի Ա. Գէորգ ուխտաւորում արդ-եանց վերահասու էր նշանակել Գրիգոր վարդա-պետ Յովսէփանցին (յետոյ եպիսկոպոս) : Այդ-տեղ եթէ չարաթ ուխտաւորներ են յաճա-խում : Երբ ուխտի շարաթները յետոյ վերա-դարձաւ Գրիգոր վարդապետն եւ անձամբ ներ-կայացրեց կաթողիկոսին արդիւնքը՝ վեհափառն ինձ հրամայեց գանձարանի տուժարը բերել եւ մատուցուած գումարը վարդապետի ներկայա-թեամբ համարել եւ տոմարում գրել : Մինչ-դեռ ես համարում էի գումարը կաթողիկոսն ըստ իւր սովորութեան ձեռները գոտիին իրած մաս էր գալիս դահլիճում. յանկարծ եկաւ կանգ-նեց Գրիգոր վարդապետի առաջն եւ իւր հրա-ցայա աշքերը նորա երեսին յառած հարցրեց . « Ըձմարիտն ասա վարդապետ, այս փողերը գու-վեցրե՞լ ես քեզ բաժին » [փողի քանակութիւնը կը լինէր մինչեւ 300 ըսպլի] : « Մտաւ եմ » երևուեւ մանէթ վեցրել եմ », ասաց վարդա-պետը :

(Շարունակելի)

Հարկադրուած ենք կրկինել թէ ձրի ծանուցում չենք հրատարակել : Ազգային եւ բարեգործական հաստատութեանց ծանուցումները միայն կէս ցնով, այսինքն տողը 10 սանդղակ հաշուով եւ կանխիկ վճարելու պայմանաւ կը հրատարակենք :

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Քօն-Քօնտան իշար օլընտըը իւզրէ, ձաբօն տօնանմասը Հինտ Ովկիանոսընտա Պալթիկ տօնանմասը իլէ վուրուչաճագ ըմըլ :

— Բուս թէլէկրափլարընա պիւնաէն, ի՛նչուրիտաա իքի օրտուլարըն պոյաւտա ուփագ միւսատէմէլէլ տէվամ իթմէքտէ, Բուսլար ձաբօնլըլարըն խէնտէկլէրինի թօբա թուլթմագտա, դեկտ. 6 տա ձաբօն պէօլիւկլէրի բուս խաթթընա հլւճուճ իթմիշլէր փագաթ կէրի սիւրիւլմիշլէր : Բուսլար ձաբօնլըլարըն պիւր պարաթ տէբօսընը եագմըլլար :

— Բօրթ Արթուրը իհաթէ իտէն ձաբօն օրտուսընտան Ձիփույա կիտէն պիւր ձաբօնլըլ իթղուչան վէ Պօրտի գալէլէրինին ալընմասընա տայիւր շէօյլէ մալիւմաթ վէրիի իմիշ իւլէ կիւն միւթէմատիէն ձաբօնլըլար Պօրտի գալէսինէ հիւճուճ իթտիլէր, պու գալէսինէ էթրափընտա Բուսլար 600 մէթրօ ուլուն վէ 10 մէթրօ կէնիշ խէնտէքլէր ալմըլ օլուպ, անլէրի կազլէ տօլտուրաւագ իւզէրլէրինէ օտուճ վէ սաւմանլէ էօրթմիշլէր իտի. հիւճուճ էսնասընտա ձաբօնլըլարտան չօդար մէղքիւր խէնտէքլէրէ տիւշտիլէր, վէ Բուսլար էլէքթրիքլէ տէրհալ աթէշ վէրուպ խէնտէքլէրիթուլթուշտուրտուլար : պու աթէշլէ պիւր գաշ եիւզ ձաբօնլըլ թէլէֆ օլտու. փագաթ ձաբօնլըլար թէքրար գալէի գալթ իտէրէք, օրատա ձաբօն վէ չին պանտէրալարընը տիքտիլէր : իշպու հիւճուճագ մանտա իտէն ձաբօն ժէնէրալըն պիւր գօլու վէ պիւր այաղը կիւրլէտէն բարշալանտը :

— Շանկալտան գաշմըլ օլան «կրօզօլօյ» նամ բուս գօնթր թօրբիլէօրլն գաբտանը ձաբօնլըլար պիւր ինկիլիզ վարօրընտա թուլթմալար, անըն իւզէրինտէ խաթիթալար վէ սաիւր մուհիւմ էվրագլար պուլընմըլ :

— Նոյեմ. 8 տէն 25 է գատար Բօրթ Արթուրը իհաթէ իտէն ձաբօն օրտուսընըն թէլէֆիաթը Բուսլար 37000 քիշի կէօթէրիյօրլար : Ձաննըմըլճա Բուսլար տիւչմանըն թէլէֆիաթըն կէօթէրմէք իշիւն պիւր զըֆըր զիյտաէ գօյմագ աաթէթ իթմիշլէր :

— Շալսօ ըրմաղը իւզէրինտէքիքէօրիւլի մուհափագա իտէն իսթիհքեմալը ձաբօնլըլարըն զապլթ իթտիքլէրինի, փագաթ

Բուսլար պիւր էճգա իլէ մէղքիւր իսթիհքեմալը հալալա աթուպ ձաբօնլըլարը թէլէֆ իթմիշլ օլտըգլարընը ժէնէրալ Բուրօբաթթէրին գնկտ. 6 թարիլիլի թէլէկըրափլէ պիւրիւմիշ տիւր :

Ի Ր Ա Ո Ւ Ն Ք

Ձարըն րէյասէթի ալթընտա դեկտ. 8 տէ պիւր խուսուսի մէճ լիւ թէճէմմի օլընմըլ, իշպու մէճլիտէ կրան տիւք Միխայէլ իլէքսանտրօլիշ, Բօրիէտօնօղէվ, Վիթթէ վե բրէնա Սվիաթօթօթ իմիւրքի պուլընմըլլար, վէ տալիլի ահվալ իլէ մէղքու օլմուշլար : Մէճլիա էրթէսի կիւնիւ տէվամ իթմիշ :

— Վիէննանըն «Ալի. Յայթուճ» կըն իսպարը իւզրէ, Ձար գանուճ էսատի (Սահմանագրուլթիւն) վէմմէյէճէք վէ փագաթ կէնիշ իսլահաթլար իճրա իթտիլէճէք իմիշ : Ձարըն վալիտէսի պու իսլահաթլա գուվէլթ վէլմէք տէյօրլար :

ՍՕՆ ԹԻԼԷԿՐԱՖԻԱՐ

Սթանպօլ 9 դեկտ.

Պուլկար էքսարքանէսինտէ զուհուրա կէլէն եանկընըն դօմիթաճըլտը էլի իլէ օլտըղընա տայիւր շայէաթ էսասսըղ տիւր : Եանկըն պաճա թուլթուչմասընտան իլէրի կէլմիշ տիւր : Բիլիսէյէ վէ Պապը իլիյէ տայիւր էվրագլար գուրթուլմըլ, եալընըլ մէքթէպլէրն տայիւր օլան էվրագլարըն էքսէրիսի եանմըլ տըր :

Բէվայէթէ կէօրէ, Սէլանիկ, Մանասթըր, Բօսթուր վէ Մալքէնսոլ մէթրօթօլիտէրին մէմուրիյէթտէն թարա ու աղլ օլընմալարընը Պապը Ալի բաթրիգտէն թալէպ իթմիշ, զիւրա Սէլանիտէքի եուսան ժէնէրալ գօնսօլընըն պիւր չէթա րէյիսինէ կէօնտէրմիշ վէ թուլթուլմուշ օլան մէքթուպ մէղքիւր մէթրօթօլիտէրի հիւքիւմէթ էնտիւնտէ մէսուլ պըրագըր ըմըլ : Մէղքիւր մէքթուպտա գօնսօլու չէթա րէյիսինէ ումուլի թալիւմաթլար վէ բուպ մուհափասալթալիւմաթլարը տալի մէղքիւր մէթրօթօլիտէրտէն գապուլ իտէճէկիւնի իւլալէ իթմիշ :

Խարիճիյէ նաղըրը Թէվֆիգ բաշա պու կիւն իսլահաթճը տէվլէթլէրին էլիլիլէրինէ վիլիթա վէրտի : ի՛նչքէթոնիաւա ժանտարմա զապլթլէրի նին աթթըրմասընա Պապը Սլի մէյիլի կէօրիւնիյօր :

Զիֆու 9 դեկտ.

«Տէյլի թէլէկրաֆ» — ձաբօնլըլար իցէշան գալէսինի թէրք իթմէկէ մէճպուր օլալար, զիւրա ճիւլար գալէլէրտէն կէլէն աթէշտէն վէ լաղըմլարըն բաթլաւասընտան աղըր թէլէֆիաթ վէրտիլէր : Ժէնէրալ Նօկի 60000 աաքէր իմատա իսթէմիշ : Շիմալտան աաքէր վէ պիւր գաշ պիւր Գօրէալըլար Բօրթ Արթուր ճիւլարընա եէթիշմիշլէր :

Լօնտօն 9 դեկտ.

«Ռէյթըր» ըն Բօրթ Արթուրը մուհասէրէ իտէն օրտուտան ալտըլը մալիւմաթ իւզրէ, թուճէրինկվանշան գալէսին զապլթ օլընմասը ձաբօնլըլար էլիւն պէօլէք էհէմիլիյէթի վար, զիւրա մէղքիւր գալէ եիւքսէք թէքէյէ տօղրու աշալօր վէ շարգ գալէլէրինէ գարչը ումուճ հիւճուճ իտէպիլմէք իշիւն ձաբօնլըլարա պիւր կէնիշ մէյտան վէրիյօր :

Բէթէրպուրկ 9 դեկտ.

Ձէրնօկօվսքօ Ձէմստվօնըն մուրախասը ալըն 6 սընտա Ձարա Ձէմստվօ թարափընտան պաթէլէկրաֆ Եօլ իտարէի ումուլի վէ թէլէքիւլաթ մէսէլէլէրինէ տայիւր պիւր իսթիտա եօլլամըլ : Ձար մէղքիւր թէլէկրաֆ իւզէրինէ շու իթիւրաղաթը եաղմըլ : «Մուրախասըն հարէքէթի թէճալիւզանէ վէ գաթիտսիլ պուլըլօրմ հիւքիւմէթէ վէ իտասէյէ տայիւր մէսէլէլէր Ձէմստվօլարըն սէլահիլէթ իտարիճիւնտէ տիւր, զիւրա անլէրին մէղքիւրիյէթ վէ վաղիլիէր գանուսնամէլէրլէ թալին օլընմըլ տըր :

Սինկտօր 9 դեկտ.

Իքի ձաբօն գրուաղէօրլէրի պուսապահ պուրալա եէթիշտիլէր վէ էօյլէնտէ կիթտիլէր : Թէմին իտիլտիկի իւզրէ, 2 զըրհլը, 4 գրուաղէօր վէ 12 թօրբիլէօր պուրալա եագըն օլուպ, ճէնուպա կիթմէքտէ տիւրլէր :

Շանկալ 9 դեկտ.

Պիւր ձաբօն ֆիլօսը գուլէթլի զրուաղէօրլէրլէ վէ տմիւրալ Գամիւմուրանըն գօմանտաւսը ալթընտա ճէնուպի չին տէնիլիլէն տօղրու հարէքէթ իթտի Պալթիկ տօնանմասըն գարչըլամագ իշիւն :

Թօքիօ 9 դեկտ.

— (Բէյթըր) կէօլէրիլն քէօրֆէլիտէ ձաբօնլըլար էհէմիլիյէթլի մէլգըլար զապլթ իթտիլէր :

Բէթէրպուրկ 9 դեկտ.

(Բէսմի) Բուրօբաթթիւնի Ձիւլիլէրտէն ալտըլը մալիւմաթա պիւնտէն, ձաբօնլըլար 203 մէթրօլըք թէրէի թէքրար զապլթ իթմիշլէր օրատա պուլընան թօրլորլէ պէրապէր :

ԹԻԻՃՃԱՐՅԷ

ՎԱՌՆԱ, ՉԱՌԻՐԷ	դեկ. 11
ՊՈՒՂՏԱՅ	
Վալօն	54-60 լիպ. 8.80 / 11.80
Երապա	52-62 լիպ. 9 / 12.80
ԱՐՔԱ	
Վալօն 100 քիւլօ հիւ	10.40/10.80
Նօր	
Արապա 42-45 լիպ.	6 / 6.20
ԵՈՒԼԱՖԱՐԱՅԱ 33/36 լպ.	4. 20/4.40
Վալօն 100 քիւլօ	10.40/10.60
ՅԱՍՈՒԼԵԼ	100 քիւլօ - 23 - 24
Արապա 100 քիւլ.	23-25
ՏԱՐԸ	արապա հէքթ. 14-15
ԳՕԼՕՁ	արապա 55-60 լպ 10. 50 / 12
ՄԻՍԻՐ	57-58 լպ 7.60/8. 80
ՉԱՎՏԱՐ	արապա 8 — 8.20
	100 քիւլօ 11.60/11.70
Կիւնտէ 30 - 40 վալօն վէ	150-200
արապա կլմէքտէ. վալօն մուսմէլէսի	
նարօլէն 20 ֆր. արապա մուսմէլէսի	
նարօլէն 20. 20 :	
ՍԱՐԱՖԱՅԷ	
Նարօլէն 20, 20 ֆրանք	
Օսմ. լիբասը 22, 75 ալիւն ֆրանք	
ՊԱԳԱԼԻՅԷ	
Վարնա քիւղաթընտա պապգալիյ Գ	
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուճ	
բանք իլէ :	1,95/2 10
Շէֆէր Նէմցէ	81
Շէֆէր քէմմէլ սանարդ	41. 50
Բիլիւճ Ֆիլիպէ շուվալը	45 .
» ձաբօն »	38 .
» ինկիլիլ »	27 .
» Բիզմ »	50
ԿԼԶ, սանարդը	8. 80
Ձէթիւն հաղը քիւլօ	91.—
ԳՈՒՐՈՒԿԼԱՐ	80

ՄԱՔՈՒՐ ԿՈՐԵԿԱԶՈՒՐ (Պ Օ Ձ Ա)

20 երկար տարիներու փորձաբուլ իւնս համաճալիթիւն կուտայ ինձ ծանուցանել արդօյ յաճախօղնիւրուսթէ ինչպէս ուրիշ տարինի նուաւայ տարի կը պատրաստուի մոքուր, թարմ եւ համեղ կորեկի ջուր, սննդարար եւ ախորժիկ :

Ասալը-Համաթի կից թիւ 577
ՏԱՔԷՍԵԱՆ ԵՒ ՍՈՒՎԱՐԵԱՆ

ՄԱՎԱԶԻՆ ՏԷ ԳԼՈՐ ՄԷՋՈՆ

Տ Օ Պ Ր Ի 2

Երանտան էվլէլ Լէվսքի սօգաղըն - տալ պուլընտան մանիֆաթուրա վէ կալանթարալ մաղաղամըլը պու տէֆա «Մարիա Լուիզա» սօգաղընտա 248 նօմէրօյա նաղլ իթիկիլմիլի բաղալէթիւ միւլթէրիլէ-իմիլէ իւնս իտէրիլ :

ՅՈՒԼՅԱՆԷՍ ՏԱՎՈՒՏԵԱՆ
ՎԷ ԷՎԼԱՏԼԱՐ

Է Օ Ռ Օ Բ Է Է Ն

Յրաքսէրիւն միշաղգային շայարսրիւր

Նշանաւոր գրագէտներու խուճիկ վարչութեամբ հրատարակուող այս շաբաթաթիւերիլ կը պաշտպանէ բոլոր հարաւարաւող մողովուրդներու իրաւուքը լուրջ եւ բաղադրական համալիւսաբուած յօդուածներով : Գինն ապիկան 15 եւ վեցամսեայ 8 ֆր. Խնդրողին իւր նմոյշ օրինակ մը ձրի կը զրկէ : Հասցէն Վարչութիւն «Եօնօրէիկ»ի 24 Տօֆին փողոց ԲԱՐԻՉ 6 լպ .

Одговорились А. Курбетиянц
почетным—«Взаимность», Варна